Գերմանական Բունդեսթագ **տպագիր փաստաթուղթ 18/8613**
18-րդ ընտրաշրջան 31.05.2016թ.

Դիմում

ՔԴՄ/ՔՍՄ – ի, ՍԴԿ-ի և ԴԱՇԻՆՔ 90/ԿԱՆԱՉՆԵՐԻ խմբակցությունների կողմից

1915 և 1916թթ. հայերի և քրիստոնյա այլ փոքրամասնությունների դեմ իրագործված ցեղասպանության ոգեկոչումն ու հիշատակը

Բունդեսթագը որոշում է.

I. Գերմանական Բունդեսթագը սահմանում է.

Գերմանիայի Բունդեսթագը խոնարհվում է Օսմանյան կայսրությունում ավելի քան 101 տարի առաջ հայերի և քրիստոնյա այլ փոքրամասնությունների նկատմամբ իրագործված տեղահանությունների և կոտորածների զոհերի առջև: Նա դատապարտում է ժամանակի երիտթուրքական կառավարության հանցագործությունները, որոնք հանգեցրեցին հայերի գրեթե լիակատար բնաջնջմանն Օսմանյան կայսրությունում: Տեղահանությունների և կոտորածների զոհ դարձան նաև քրիստոնյա այլ էթնիկական խմբեր՝ հատկապես ասորի/ արամեացի և քաղդեացի քրիստոնյաները:
Ժամանակի երիտթուրքական ռեժիմի հանձնարարությամբ 1915թ. ապրիլի 24-ին Օսմանյան Կոստանդնուպոլսում սկսվեց ավելի քան մեկ միլիոն էթնիկ հայերի ծրագրված տեղահանումն ու բնաջնջումը: Նրանց ճակատագիրը որպես վառ օրինակ է հանդիսանում զանգվածային բնաջնջումների, էթնիկ զտումների, տեղահանումների, այո՝ ցեղասպանությունների պատմության համար, որոնց զարհուրելի կնիքն է կրում 20–րդ դարը: Ընդ որում մենք գիտենք Հոլոքոստի եզակիությունը, որի համար Գերմանիան մեղք ու պատասխանատվություն է կրում:
Բունդեսթագը ցավում է կայզերական Գերմանիայի անփառունակ դերի համար, որը որպես Օսմանյան կայսրության գլխավոր ռազմական դաշնակից, ստանալով հայերի կազմակերպված տեղահանումների և բնաջնջման մասին միանշանակ տեղեկություններ, նաև գերմանացի դիվանագետների և միսիոնարների կողմից, չփորձեց կասեցնել մարդկության դեմ իրագործվող այդ հանցագործությունը: Այս ոգեկոչմամբ Գերմանիայի Բունդեսթագը

Նախնական թարգմանություն է հանդիսանում միայն. խմբագրական սխալներ հնարավոր են:

արտահայտում է իր հատուկ հարգանքը երկրագնդի թերևս հնագույն քրիստոնյա ժողովրդի հանդեպ:

Գերմանիայի Բունդեսթագը ամրագրում է իր 2005 թվականին ընդունած բանաձևը (տպագիր փաստաթուղթ 15/5689), որը նվիրված էր ինչպես զոհերի հիշատակին, այնպես էլ իրադարձությունների պատմական գնահատականին՝ նպատակ ունենալով նպաստել թուրքերի և հայերի միջև հաշտությանը: Ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ 2015թ. ապրիլի 24-ին Գերմանիայի Բունդեսթագում տեղի ունեցած հատուկ նիստի ընթացքում բոլոր խմբակցություններից ելույթ ունեցողները, և հատկապես ԳԴՀ նախագահն այդ քննարկման նախօրյակին, դատապարտեցին հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությունը, հարգեցին զոհերի հիշատակը և հաշտության կոչ արեցին: Կայզերական Գերմանիան մեղսակից է եղել այդ իրադարձություններին:

Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի հատուկ պատմական պատասխանատվությունը, որը ներառում է նաև հայերին և թուրքերին աջակցելու պարտականություն՝ անցյալի անդունդները հաղթահարելու և հաշտության ու փոխըմբռնման ուղիներ փնտրելու գործում: Հաշտեցման այս գործընթացը վերջին տարիներին շտապ նոր խթանների կարիք ունի:

Գերմանիայի Բունդեսթագը հարգում է ոչ միայն աներևակայելի դաժան հանցագործության զոհերի, այլև այն բոլոր անձանց հիշատակը, որոնք Օսմանյան կայսրությունում և կայզերական Գերմանիայում 100 տարի առաջ, դժվարին պայմաններում և իրենց կառավարությունների դիմադրության ներքո, տարբեր միջոցներով ամեն ինչ ձեռնարկեցին հայ կանանց, երեխաներին ու տղամարդկանց փրկելու համար:

Այսօր Գերմանիայի դպրոցական, համալսարանական և քաղաքական կրթության առջև առաջադրանք է ծառանում՝ ուսումնական ծրագրերում և նյութերում ընդգրկել հայերի տեղահանման և բնաջնջման թեման, որպես 20-րդ դարի էթնիկ բախումների պատմության մաս՝ ավանդելով այն գալիք սերունդներին: Այդ հարցում կարևոր դեր ունեն կատարելու հատկապես ԳԴՀ-ի երկրամասերը:

Հաշվի առնելով Գերմանիայի դերը՝ Բունդեսթագը գտնում է, որ տեղահանումների և կոտորածների զոհ դարձած հայերի ոգեկոչումը, ինչպես նաև թեմայի իրազեկումը հայկական ու թուրքական ծագում ունեցող համաքաղաքացիներին, նպաստում է նաև նրանց համախմբմանն ու համատեղ խաղաղ գոյակցությանը:

Գերմանիայի Բունդեսթագը ողջունում է այդ թվում նաև Թուրքիայի գիտական, քաղաքացիական հասարակության, արվեստի ու մշակույթի բնագավառներում աճող այն նախաձեռնությունները ու ներդրումները, որոնք ուղղված են հայերի նկատմամբ իրագործված հանցագործության առերեսմանը և թուրքերի ու հայերի միջև հաշտեցմանը:

Գերմանիայի Բունդեսթագը շարունակում է խրախուսել ԳԴՀ կառավարությանը՝ 1915թ. հայերի դեմ իրագործված տեղահանումների և կոտորածների զոհերի ոգեկոչմանն ու պատմական վերաարժևորմանն ուշադրություն հատկացնելու գործում: Գերմանիայի

Նախնական տարբերակ. փոխարինվելու է խմբագրված տարբերակով:

Բունդեսթագը ողջունում է նաև հարցի խթանմանն ու օժանդակությանն ուղղված յուրաքանչյուր նախաձեռնություն:
Գերմանիայի սեփական պատմական փորձը ցույց է տալիս, թե որքան դժվար է յուրաքանչյուր հասարակության համար՝ առերեսվել իր անցյալի մութ էջերին: Այդուհանդերձ պատմության անաչառ հետազոտումը թերևս հաշտության ամենակարևոր հիմքն է հանդիսանում ինչպես տվյալ հասարակության ներսում, այնպես էլ արտաքին հարաբերությունների մեջ: Ընդ որում այստեղ պետք է տարբերել ոճրագործների գործած մեղքը այսօր ապրող մարդկանց կրող պատասխանատվությունից: Բացի այդ անցյալի ոգեկոչումը նախազգուշացնում է մեզ՝ արթուն մնալ և թույլ չտալ, որ ատելությունն ու ոճրագործությունները վերստին սպառնան մարդկանց ու ժողովուրդներին:
Գերմանիայի Բունդեսթագը գիտակցում է, որ 2005 թվականից ի վեր Հայաստանի և Թուրքիայի ներկայացուցիչները մերձեցման փորձեր են նախաձեռնել՝ թե՛ ոգեկոչման և թե՛ միջպետական հարաբերությունների կարգավորման հարցերում: Այդուհանդերձ երկու պետությունների միջև հարաբերությունները շարունակում են մնալ լարված՝ կրելով փոխադարձ անվստահության կնիքը: Գերմանիան պետք է օժանդակի հայերին և թուրքերին մերձեցման գործընթացում: Իսկ պատմության վերանայումն այստեղ անխուսափելի է. դա է փոխըմբռնման հիմքը թե՛ ներկայի և թե՛ ապագայի համար:
Թուրքիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների լիցքաթափումն ու կարգավորումը կարևոր է նաև կովկասյան տարածաշրջանի կայունացման համար: Գերմանիան ԵՄ հարևանության քաղաքականության շրջանակներում իրեն պատասխանատու է զգում հայ-թուրքական հարաբերություններում ունեցած իր պատմական դերի առումով:

II. Գերմանիայի Բունդեսթագը կոչ է անում գերմանական կառավարությանը.

- հարյուրամյակի կապակցությամբ 2015թ. ապրիլի 24-ին Գերմանիայի Բունդեսթագում տեղի ունեցած քննարկման նիստի ոգով շարունակել նպաստել 1915/1916 թվականների հայերի տեղահանման և գրեթե լիակատար բնաջնջման, ինչպես նաև այդ հարցում կայզերական Գերմանիայի ունեցած դերի մասին հրապարակային լայն քննարկմանը,
- թուրքական կողմին խրախուսել՝ զբաղվելու ժամանակին տեղի ունեցած տեղահանումների և կոտորածների հարցով՝ հայ ժողովրդի հետ հաշտեցման գործընթացում հիմնաքարը դնելու համար,
- շարունակել միջնորդել անցյալի վերանայման գործում՝ թուրքերի և հայերի միջև մերձեցմանը, հաշտությանը և պատմական մեղքի ներմանը հասնելու համար,
- շարունակել օժանդակել և պետական բյուջեի տրամադրած միջոցների սահմաններում ֆինանսավորել Թուրքիայում և Հայաստանում գիտական, քաղաքացիական հասարակության և մշակութային այն միջոցառումները, որոնք կծառայեն հայերի և թուրքերի միջև շփման, մերձեցման ու պատմության վերաարժևորման գործընթացին,

Խմբագրված չտպագրված փաստաթուղթ է ուսումնական նպատակով:

- ակտիվորեն աջակցել Հայաստանի և Թուրքիայի կողմից պատմական իրադարձությունների վերանայման գործընթացին՝ որպես հաշտեցման ու հայ-թուրքական հարաբերությունների վաղուց սպասվող բարելավման առաջին քայլ, օրինակ՝ գիտնականներին կրթաթոշակներ շնորհելով կամ աջակցելով երկու երկրների քաղաքացիական հասարակության այն ուժերին, որոնք ակտիվ գործում են վերահիմաստավորման և հաշտեցման ուղղությամբ,
- Թուրքիայի և Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչներին խրախուսել՝ շարունակելու այս պահին լճացման մեջ գտնվող միջպետական հարաբերությունների կարգավորման գործընթացը,
- ջանք գործադրել, որպեսզի Թուրքիայի և Հայաստանի կառավարությունները վավերացնեն 2009թ. ստորագրված ցյուրիխյան արձանագրությունները, որոնք նախատեսում են ստեղծել պատմության գիտական հետազոտման հանձնախումբ, դիվանագիտական հարաբերությունների կարգավորում և համատեղ սահմանի բացում,
- միջնորդել, որպեսզի վերջին տարիներին Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ սկիզբ առած քայլերն ավելի եռանդուն կերպով շարունակվեն,
- ֆինանսական հնարավորությունների շրջանակներում Գերմանիայում նույնպես շարունակել օժանդակել գիտական, քաղաքացիական հասարակության և մշակույթի բնագավառներում տարվող այն նախաձեռնություններն ու ծրագրերը, որոնք թեմատիկ առումով առնչվում են 1915/16թթ. իրադարձությունների ն:

Բեռլին, 31-ը մայիսի, 2016թ.

Ֆոլկեր Քաուդեր, Գերդա Հասելֆելդթ և խմբակցություն
Թոմաս Օպերմանն և խմբակցություն
Կատրին Գյորինգ-Էքարդթ, դոկ. Անտոն Հոֆրայթեր և խմբակցություն

Խմբագրված տարբերակում է ունեցիր հիմնական տարբերություն.

Հիմնավորում

Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի բնաջնջումը հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի համար մեծագույն և ծանրագույն հետևանքներ ունեցող աղետ էր: Անկախ աղբյուրների հաշվարկներով տեղահանումներին և զանգվածային ջարդերին զոհ դարձան միլիոնից ավել հայեր: Բազմաթիվ անկախ պատմաբաններ, խորհրդարաններ և միջազգային կազմակերպություններ հայերի տեղահանումներն ու բնաջնջումը որակում են որպես ցեղասպանություն: Ինչպես կրոնը և լեզուն, այնպես էլ բռնագաղթերի և կոտորածների հիշատակը հարգելը կարևոր նշանակություն ունի այս ժողովրդի ինքնության համար:
Գերմանիայի Բունդեսթագը հիշում է այս իրադարձությունները՝ նաև Առաջին համաշխարհային պատերազմի մասին հիշողության համատեքստում: Կայզերական Գերմանիան Օսմանյան կայսրության գլխավոր ռազմական դաշնակիցն էր: Տեղյակ լինելով հայերի հետապնդումների և սպանությունների մասին, Գերմանական կայսրության այն ժամանակվա կառավարությունը այնուամենայնիվ ոչինչ չձեռնարկեց: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ստանձնում է պատասխանատվություն՝ խթանել այս հանցագործությանը առերեսման գործընթացն ու արթուն պահել դրա մասին հիշողությունները:
Չնայած փաստերի առկայությանը, Թուրքիան մինչ օրս ժխտում է, որ հայերի տեղահանությունը, հետապնդումը և կոտորածը նախապես ծրագրված են եղել և որ բռնագաղթի ճանապարհին տեղի ունեցած զանգվածային ջարդերն օսմանյան կառավարության կողմից կանխամտածված են եղել:
Ընդհանուր առմամբ ջարդերի և տեղահանումների ծավալը Թուրքիայում դեռևս կասկածի տակ է դրվում: Այնուամենայնիվ կան նաև հակառակ միտումներ: 2008թ. թուրք-հայկական մերձեցման հուսադրող առիթ կար, երբ երկու երկրների նախագահները միասին ներկա գտնվեցին համատեղ ֆուտբոլային խաղին՝ ի ցույց դնելով իրենց կամքը հետագա բանակցություններ վարելու հարցում: 2009թ. երկու երկրների արտաքին գործերի նախարարները ստորագրեցին հայ-թուրքական արձանագրություն, որը, ի թիվս այլոց, նախատեսում էր ստեղծել պատմությունը գիտականորեն ուսումնասիրող հանձնաժողով: Սակայն մինչ օրս այդ արձանագրությունը չի վավերացվել երկու երկրների խորհրդարանների կողմից:

Երկու ժողովուրդների միջև հաշտեցումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե 100 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունները հիմնավորապես պարզաբանվեն և փաստերն այլևս չժխտվեն: Դրա համար անհրաժեշտ է, որ հայերի տեղահանման և սպանությունների պատմության ուսումնասիրության ժամանակ պատմաբանները և լրագրողները Թուրքիայում կարողանան ազատ գործել՝ չվախենալով քաղաքական հետապնդումներից: Կոտորածի վերանայման թեմային առնչվող բազմաթիվ նախաձեռնություններ կան արդեն Թուրքիայում: Վերջին տարիներին այս թեման թուրքական հասարակության մեջ գնալով դառնում է բանավեճերի առարկա: Այս զարգացումները ողջունելի են այնքանով, որքանով ողջունելի են քաղաքացիական հասարակությունների այն անդրսահմանային նախագծերը, որոնք տարիներ շարունակ ֆինանսական աջակցություն են ստանում ԳԴՀ Արտաքին գերատեսչությունից:
Կայզերական Գերմանիան, որպես Օսմանյան կայսրության գլխավոր ռազմական դաշնակից, նույնպես խորապես ներգրավված էր այդ իրադարձություններում: Գերմանական կայսրության ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ղեկավարություններն ի սկզբանե տեղեկացված էին հայերի հետապնդումների և սպանությունների մասին: Երբ ավետարանչական եկեղեցու աստվածաբան դոկ. Յոհաննես Լեփսիուսը 1915թ. հոկտեմբերի 5-ին Գերմանիայի Ռայխսթագում ներկայացրեց 1915թ. հուլիս-օգոստոս

Խմբագրված չի հրատարակվում. Հրատարակման է նախապատրաստվում

ամիսներին Կոստանդնուպոլսում իր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, կայզերական Գերմանիայի ղեկավարությունն այդ թեման ամբողջությամբ ենթարկեց գրաքննության: Լեփսիուսի «Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին զեկույցը», որը նա անմիջականորեն ուղարկել էր Ռայխսթագի պատգամավորներին, 1916թ.-ին գերմանական ռազմական գրաքննությունը նույնպես արգելել ու բռնագրավել էր, և միայն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո 1919թ. այն փոխանցվել է պատգամավորներին: Չնայած գիտության, քաղաքականության և եկեղեցական ոլորտի գերմանացի անհատների, այդ թվում նաև քաղաքական այնպիսի գործիչների, ինչպիսին են Ֆիլիպ Շայդեմանը, Կարլ Լիբկնեխտը կամ Մաթիաս Էրցբերգերը, և ավետարանչական ու կաթոլիկ եկեղեցիների նշանակալի հեղինակություններ Ադոլֆ ֆոն Հառնակի և Լորենց Վերթմանի հրատապ խնդրագրերին՝ կայզերական Գերմանիայի իշխանությունն իր օսմանյան դաշնակցի վրա որևէ ճնշում չգործադրեց:

Օսմանյան կայսրությունում գերմանացի դեսպանների և հյուպատոսների զեկույցների վրա հիմնված Գերմանայի Արտաքին գերատեսչության ակտերը նույնպես հաստատում են կոտորածների և տեղահանումների պլանավորված իրականացման փաստը: Դրանք այդ ժամանակ տեղի ունեցած դեպքերը փաստող կարևորագույն պետական տեղեկատ-վությունն է: Գերմիայի Դաշնային Հանրապետության Արտաքին գերատեսչությունը դեռևս տարիներ առաջ այդ ակտերը հասանելի էր դարձրել: 1998թ. այդ ակտերի մի ամբողջական փաթեթ միկրոֆիշի տեսքով փոխանցվել է Հայաստանին: Դրանից անմիջապես հետո Թուրքիան նույնպես ստացել է այդ ակտերի մեկ օրինակ:

Հրատարակման պատրաստեցին Յուրեկյան եղբայրներ